

սեր հոկտեմբեր 17-ի ազատարար հրովարտակը՝ կջանան իրաւոցրձել նորան կեանքի մէջ սոսկ խաղաղ ճանապարհով, մօտենալով իրանց ծրագրով կօնստիտուցիօննօ-դէմոկրատ կուսակցութեան ուղղութեան, նայած մեր ազգային շահերին նոր կուսակցութիւնը կովկասը համարելով բնաշխարհ մեր և մեր հարեանների, ոչ ի բաց առեալ և կովկասեան ոսներին, պիտի կապուի նոցա հետ համերաշնութեամբ, առաջն առնէ հայ գաղթականութեան. նորա քաղաքականութիւնը պիտի լինի՝ ազգեկեղեցու անկախութիւնը, լեզուի ազաւութիւնը, բարեգործական ընկերութիւնների և ուսումնարանների ազատ պահպանութիւն և վերջապէս Տաճկաստանի և այլ հայերի բարենորոգման ինդիբը, բայց այս ամենը միմիայն կուլտուրական խաղաղ ճանապարհով:

— Տարին նոր է սկսում և արդէն բազմաթիւ տեղերից, մանաւանդ Պարսկաստանի խորքերից դիմում են մեզ և խնդրում ձրիաբար «Լումաւ» ուղարկել այնտեղի գրադարաններին, մատնացոյց տնելով իրանց աղքատին վիճակը: Խմբագրութիւնս ուղարկում է որչափով որ Համարաւոր է համարում, բայց ամենքին օգնութեան հասնել անկարող է, մանաւանդ այս տարին, երբ ազգային աղէտների պատճառով, բաժանորդագրութիւնը կաղի կաղէ ընթանում: Ուստի միւններին բաւարարութիւն կտանք, երբ բարեսէր մարդիկ «Հումայշ» աւելորդ օրէնսակներ կթողնեն խմբագրութեանս տնօրինութեան:

### ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ

#### I.

Գրիգորիս քահանայ Երզնկեանցը մեր կոնսիստորիայի ծառայողներիցս ըուկոտի արժանանալուց յետոյ գրել էր, որ կոնսիստորիալի ծառայողներս վարակուած ենք կաշառակերութեամբ, ծծում ենք ժողովրդի հիւթը և անփոյթ ենք մեր գործավարութեան մէջ: Մենք պատրաստեցինք մի ընդարձակ պատասխան այլ զրպարտութեան դէմ միառմի հերքելով բոլոր կէտերը և ընդհակառակը ցոյց տուինք նորա մըտցրած այն նոր եւ թարմ հոսանքը, որ բանդելով կոնսիստորիայի իշաւանց ու արդարութեան թումբը՝ տգէտ, անուս և թերուս տիրացուների մերժուած գործերը առաւ ու տարաւ, քչեց ու հասցըեց, հանեց մինչև մինօտ ձեռնադրելու համար: Այս ամենը ապացուցուած էր փաստական կերպով. և որովհե-

մեւ այդ մեր պատասխանը շատ իրարանցում պիտի հանէր,  
ուստի անհրաժեշտ էր որ ներկայացնէինք այն նորին Բարձր  
սրբ. թեմակալ Առաջնորդին ի գիտութիւն. և ապա թէ հրա-  
պարակ հանէինք, սակայն ո. Առաջնորդը արգելեց մեզ, ասե-  
լով թէ՝ ես ինքս կըննեմ և արդիւնքը հնրատարակեմ լրագրի  
միջոցով, հեռացնելով պաշտօնից յանցաւորին:

Թիֆլիսի հայոց Կոնսիստորիայի ծառայողներ:

31 դկտեմբերի 1905 թ.

(Ստորագրութիւններ)

Տիկիւս

Ժամանօթ. Յանուն անկողմնապահութեան տպագրելով այս  
նամակը, մենք չենք կարող չը յայտնել մեր հետևեալ  
տարակոյնները, նախ՝ ի՞նչպէս կարող են մի հաստատու-  
թեան ստորին պաշտօնեաները կաշառակերութեամբ վա-  
րակուած լինել, երբ վերինները մաքուր են: 2. Ի՞նչպէս  
կարող է կոնսիստորի մի անդամը «տղէտ անուս» տի-  
րացուների մերժուած գործերին ընթաց տալ միայնակ,  
հասցնել սինօդ, գործն յաջողութեամբ ու տիրացուներին բա-  
հանայութեամբ պսակել տալ երբ կան միւս անդամները և  
նախագահը: 3. Ի՞նչպէս կարող է ըստեմանութիւններով օժ-  
տուած հայր Երզնկեանը, «ը սրբազն առաջնորդի առանձին հա-  
մակրութիւնն է վայելում, այդպիսի ծանր մեղաղբանքների նիւթ  
դառնալ: 4: Ի՞նչպէս հաւատանք թէ սրբ աղան առաջնորդը  
«փաստական» մի հերքում տպագրելու արգելք կդնէր:  
5. Ի՞նչ հետևանք է ունեցել այն քննութիւնը, «ը սրբա-  
զն առաջնորդը խոստացել է կատարել և ոյանցաւորին ար-  
ձակել», ԽՄԲ:

## II.

Իմ ծխական պ. Մկրտիչ Սպարապետեանցը իւր հանգու-  
ցեալ Մօր Թագուհւոյ հոգեհացի փոխարէն յանձնեց ինձ մի  
հարիւր ըուբելի, կէսը գործ դնելու յօգուտ Գանձակի աղէտեալ  
հայերի և միւս կէսը՝ Թիֆլիսի արկածեալ հայերի, որպիսի  
գումարը սորա հետ ներկայացնում եմ Խճբագրութեանդ տնօ-  
րէնութեան:

Գիհծ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

Խճբագրութիւնս յիշեալ մի հարիւր ոուբելին առանձին  
յայտարարութեամբ ներկայացրեց Վեհափառ Կաթողիկոսին:

## III.

## Յարգելի խմբագիր

Բարի եղէք զետեղելու հետեւալ նամակը պատուարժան-  
թերթիդ համարներից մէկում:

Բաց նամակ հայուհիներին-

Քոյքեր, հասել է ժամը, երբ մեզանից ամէն մէկը պար-  
տաւոր է գիտակցարար վերաբերուել դէպի օրուան չարիքը:  
Չարիքը միծ է և վճռողական: Ազգի գոյութեան հարցն է  
մեր առաջը դրուած: Մարդկային ամենամեծ սրբազնն պարտք  
կայ ամեն մի անհատի վրայ: Չեռք ձեռքի տանը և միացած  
ոյժերով գրոն տանք դէպի կործանիչ հրէշը, որպէս զի յաղ-  
թովը մենք լինենք, ոտքերի տակ թաւալենք օրուայ աւերիչ-  
չարիքին, որպէս զի անէծքների արծանի նախնիքներ չլինենք  
մեր ապագայի նոր սերնդի համար: Յուսահատուելու, ընկճուե-  
լու օրեր չեն, այդ թուլամորթներին է յատուկ, այս ու օրե-  
րին դորանից աւելի դաւաճանութիւն չկայ: Ուրեմն դէպի գործ-  
ով ինչով կարող է և ահա այդ համովանքն է, որ մեզ ստի-  
պել է դիմել մի ամենահամեստ միջոցի: Կարծում ենք, որ այս  
համեստ միջոցով ևս կարելի է սրբել թշուառների մի կաթիւ-  
արցունքը: Մենք ձեռնարկել ենք մի գրական գեղարուեստական  
ժողովածուի հրատարակութեան «Արցունքներ» վերնագրի տակ:

Ժողովածուին կամ սնակցեն միայն հայուհիները: մեր  
ձեռքի տակ եղած նիւթերը բաւական չնամարելով, ուստի  
հրապարակով ինդրում ենք այն բոլոր հայուհիներին, որոնք  
ունեն զանազան հեղինակութիւններ (օր. բանաստ. վէպիկ-  
պատմուածք: նամանաւանդ վերջին դէպերի նկարագրու-  
թիւններ) բարեհաճեն ուղարկել մեզ, որպէսզի մեր ձեռքի տակ  
եղած նիւթերի վերայ աւելացնելով, կարող լինենք շուտով  
հրատարակել «Արցունքներ» ժողովածուն, որից գոյացած զուտ  
արդիւնքը յատկացնում ենք աղէտից վնասուած հայերի օգ-  
տին: Որովհետեւ ժողովածուն զարդարուած պիտի լինի բազ-  
մաթիւ նկարներով, ուստի ինդրում ենք ուղարկել մեզ նաև  
վերջին դէպերից լուսանկարները և աղէտին զո՞ն գնացածնե-  
րի լուսանկարները: Վերջին անդամ ինդրում ենք որքան կա-  
րելի է շուտով ուղարկել մեզ մեր ինդրածները: Ժողովածուին-  
վերաբերեալ բոլոր դիմումների համար, ինդրում ենք դիմել Հ  
հետեւալ հասցէով.

Դ. Մայկոն (Կյ. օճ.) օրիորդ Զ. Բերբերեան  
Յարգանօք օր. Զարէլ Բերբերեան  
Եղիշէ. Բաղդասարեան.